# ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500




Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ
2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ
ԼԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ

| Հ/Հ | ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԹԵՐԹԻ ՀԱՄԱՐԸ |
|---|---|---|
| 1 | ԳԼԽԱԹԵՐԹ | ՃՇ-1 |
| 2 | ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃՇ-2 |
| 3 | ՈՒՂԻ N1 (ՊԿ0+00 - ՊԿ1+00) ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ | ՃՇ-3 |
| 4 | ՈՒՂԻ N2 (ՊԿ0+00 - ՊԿ0+70) ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ | ՃՇ-4 |
| 5 | ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ | ՃՇ-5 |
| 6 | ԾԱՎԱԼԱԹԵՐԹԵՐ | ՃՇ-6 |

## *ԲԱՑԱՏՐԱԳԻՐ*

Նախագծային մեր կազմակերպությունը պայմանագրով նախատեսված սույն աշխատանքների կատարման համար պետք է ունենա ստորև ելակետային տվյալները, որոնք պետք է նախատեսված լինեին *Պատվիրատուի* կողմից, մասնավորապես.

ա) Տարածքում առկա ինժեներական և կոմունիկացիոն համակարգերի վերակառուցման կամ վերափոխման տեխնիկական պայմաններ,

բ) Նախագծվող տարածքի ուրվագծի չափերը՝ նշված տոպոգրաֆիական հանույթի վրա,

գ) Տարածքում առկա գազամատակարարման համակարգի տեղափոխման համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ:

Սույն նախագծային աշխատանքների կատարման համար նախագծողը պետք է ունենա նաև.

- Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման որակավորում՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ոլորտի, ինչը մրցութային փաստաթղթերում նշված չի եղել:

Այս հանգամանքից ելնելով, եթե «Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊ Ընկերությունը չունենար ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ոլորտի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման լիցենզիա, սույն աշխատանքային նախագծի կատարումը կդառնար անհնարին:

Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները.

1) Քանդման աշխատանքներ

- Տարածքը մաքրել շինարարական աղբից, խոշորաբեկոր քարերից և այլ առարկաներից,
- Քանդել-հեռացնել տարածքում գոյություն ունեցող ջեռուցման չգործող համակարգերի ե/բետոնյա և բետոնյա առվակները, կոյուղահորերը,
- Ապամոնտաժել չգործող ինժեներական գծերը և համակարգերը,
- Քանդել-հեռացնել քայքայված և շարքից դուրս եկած ասֆալտի ծածկույթը, բետոնե և բազալտե հին և արդեն ոչ պիտանի եզրաքարերը.

2) Վերակառուցման աշխատանքներ

Սույն նախագծով առաջարկվում է կառուցել նոր տրանսպորտային հանգույց, որտեղ նախատեսվում է Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացում և բարեկարգում, մասնավորապես.

- Վերակառուցվող տարածքում կատարել բնահողի հարթեցում և տոփանում ըստ տարածքի գեոդեզիական հանույթի ուղղաձիգ նիշերի,
- Կատարել խոշորահատիկ բազալտե խճաշերտի փռում և տոփանում՝ b=200 մմ,
- Խճաշերտի վրա իրականացնել մանրահատիկ խճի և կվարցային ավազի խառնուրդ՝ ներծծված տաք բիտումե մածուծանով,
- Իրականացնել տարածքի տոփանում և հարթեցում, որից հետո կատարել ասֆալտբետոնի թվով երկու շերտերի կառուցում՝ - 1-ին շերտ - 45 մմ հաստությամբ խոշորահատիկ խառնուրդով,
- Տրանսպորտային հանգույցում, ճանապարհների երկայնքով, տեղադրել բազալտե եզրաքարեր 150x300 մմ և ե/բետոնե արգելապատեր h=1100մմ չափերով:
- Տարածքում նախատեսել արտաքին մակերևույթային ջրերի ջրահեռացում,

Սույն աշխատանքների կատարման համար մասնակիցը (Կապալառուն), պետք է ունենա հետևյալ լիցենզիաները.

- Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ներառյալ ներդիրը՝ հետևյալ ոլորտի՝
- **Տրանսպորտային:**

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմերին ու ստանդարտներին և ապահովեն աշխատանքային բարձր որակ:

Այդ նպատակով կապալի օբյեկտի, դրա առանձին մասերը և օգտագործվող շինարարական նյութերը (բազալտե եզրաքար, խիճ, ավազ, ասֆալտբետոն, բիտում և այլն) պետք է համապատասխանեն երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներին: Կապալառուն, շին. աշխատանքների ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի և շինվածքների համար, պատվիրատուին պետք է ներկայացնի դրանց հավաստագրերը, որոնք պետք է պարունակեն բոլոր անրաժեշտ տվյալները նրանց ծագման ու որակի մասին և համապատասխանեն ընդունված ստանդարտների պահանջներին: Ներկայացվող նյութերը և շինվածքների որակը,գույնը,արտաքին տեսքը պետք է համաձայնեցվի պատվիրատուի և նախագծողի հետ: Այդ ժամանակաընթացքում, եթե կառուցապատված տարածքում ի հայտ են գալիս թերություններ,կապալառուն իր ուժերով վերականգնում է այն:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ աշխատանքներին բարձր որակ ապահովելու և աշխատանքները նախատեսված ժամկետում կատարելու համար, կապալառուն պետք է ունենա.

ա) Մասնագիտական փորձառություն ,որը կապահովի աշխատանքների բարձր որակը, մասնավորապես .

4-րդ կարգի բանվոր եզրաքարերը տեղադրելու համար,

բ) Տեխնիկայի միջոցներ, նվազագույնը՝ 1 ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա, 1 զոդող ագրեգատ,1 հարվածող մուրճ, ինչպես նաև էլեկտրական ծակող, հատող , կտրող սարքավորումներ:

գ) Ֆինանսական միջոցներ,որը կապահովի սկզբնական շրջանում կատարել նախահաշվով նախատեսված աշխատանքների 20%-ը:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Ա.ԲԱԲԱՅԱՆ | | Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | | |
| ԿԱՏԱՐԵՑ | Ա.ԲԱԲԱՅԱՆ | | | | |
| | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ | Փուլ / ԱՆ | Թերթ / ՃՇ-1 | 
| | | | | Թերթեր | 6 |
| | | | ԳԼԽԱԹԵՐԹ | «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | |